«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2017 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 1708-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70–րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետը Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 1708-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

- որոշման հավելվածի 4.2-րդ և 4.3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

<>

<

ա. դրական եզրակացություն տալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարը ներկայացնում է բյուջետային հայտ՝ պետական բյուջեի պահուստային ֆոնդից ծրագիրը

ֆինանսավորելու համար,

բ. բացասական եզրակացություն տալու դեպքում՝ դրանք՝ համապատասխան եզրակացության հետ միասին ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և համապատասխան մարզպետարան (Երևան քաղաքի գծով՝ նաև Երևանի քաղաքապետարան): >>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2017 թվականի N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման» կարգի 4.2 կետի դրույթներին համապատասխան՝ համայնքների կողմից սուբվենցիաներ ստանալու համար ներկայացված ծրագրային առաջարկների մրցույթների (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ստեղծել Մրցութային հանձնաժողով և հաստատել անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված 1

ՀՀ կառավարության 2017 թվականի

--------- որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կարեն Կարապետյան- ՀՀ վարչապետ, հանձնաժողովի նախագահ

Դավիթ Լոքյան- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

Սուրեն Կարայան- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

Իգնատի Առաքելյան- ՀՀ գյուղատնտեսության նախարար

Վահան Մարտիրոսյան- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

Նարեկ Սարգսյան- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ

Արսեն Հարությունյան- ՀՀ ԷԵ և ԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Հավելված 2

ՀՀ կառավարության 2017 թվականի

--------- որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է «Պ**ետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն համայնքներին մրցութային կարգով սուբվենցիաներ** տրամադրելու նպատակով մրցույթների (այսուհետ՝ մրցույթ) անցկացման համար ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:
2. Հանձնաժողովի գործունեության վայրն է՝ քաղ. Երևան, 0010, Կառավարության 3-րդ մասնաշենք, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
3. Հանձնաժողովը՝

- իրականացնում է մրցույթների նախապատրաստումն ու անցկացումը,
- հաստատում է համայնքների կողմից ներկայացվելիք ծրագրային առաջարկների ձևաչափը, պահանջվող փաստաթղթերի ցանկը,
- հաստատում է ծրագրային առաջարկների ընտրության չափանիշները,
- հաստատում է համայնքներից ծրագրային առաջարկների ընդունման և դրանց գնահատման ժամկետները,
- ուսումնասիրում է համայնքների կողմից ներկայացված ծրագրային առաջարկները, որոշում կայացնում դրանց ֆինանսավորման կամ մերժման մասին,
- հանձնաժողովի նիստերին հրավիրվում են ծրագրային առաջարկներ ներկայացրած մարզերի մարզպետները,
- անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին կարող

է հրավիրել փորձագետների:

4. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ:
5. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ընթացքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հանձնաժողովն իրավազոր է, եթե հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

6. Նիստերում քննարկված հարցերը, եզրահանգումները և ընդունված որոշումներն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են մրցույթին մասնակից հանձնաժողովի անդամների կողմից: Հանձնաժողովի անդամի կողմից հատուկ կարծիք ունենալու դեպքում այն գրավոր ներկայացվում է հանձնաժողովի նախագահին և կցվում արձանագրությանը:
7. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք,

2) կազմակերպում և համակարգում է հանձնաժողովի աշխատանքները,

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերն ու գրությունները:

8. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2) իրականացնում է հանձնաժողովի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված աշխատանքները,

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

4) հանձնաժողովի նիստին մասնակցել չկարողանալու դեպքում (հարգելի պատճառով) նախապես տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին:

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը,

2) հանձնաժողովին տրամադրում է վերջինիս գործունեությանը վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկատվությունը,

3) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և դրանք

ներկայացնում նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների ստորագրությանը,

4) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը և փաստաթղթերը հանձնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: